



# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ. ԲԱԶՄԱԶԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Համայնքային մակարդակով հետազոտություն Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում

## Ամփոփագիր

- ՀՌԿԿ-Հայաստանը հետազոտություն է անցկացրել Լոռի, Շիրակ և Տավուշ հյուսիսային երեք մարզերում բազմաչափ աղքատությունը համայնքային մակարդակում չափելու նպատակով:
- Հետազոտությունն իրականացվել է բազմաչափ աղքատության չափման Ալքիր-Ֆոսթերի (ԱՖ) մեթոդի հիման վրա:
- ԱՖ մեթոդը կիրառվում է Համաշխարհային բանկի կողմից՝ Բազմաչափ աղքատությունն ինդեքսը (ԲԱԻ) ազգային մակարդակում հաշվարկելու համար: ՀՌԿԿ-Հայաստանն իր հերթին այս մեթոդը առաջին անգամ կիրառել է համայնքային մակարդակում փորձնական հետազոտություն իրականացնելիս:
- Հարցման հարցաշարը հիմնված էր ՎԿ-ի ՏՏԿԱՀ հարցաշարի վրա. իր

հերթին ՀԲ-ն օգտագործել էր ՏՏԿԱՀ-ը՝ Բազմաչափ աղքատության ինդեքսը (ԲԱԻ) ազգային ազգային հաշվարկելու համար:

- Ընտրանք. 2021 թվականի օգոստոսին իրականացված հարցմանը մասնակցել է շուրջ 2400 մարդ:
- Հետազոտության տվյալները բաշխվել են ըստ ութ կոնկրետ համայնքների համայնքային մակարդակի՝ ԲԱԻ ստանալու համար, որը մանրամասն ներկայացնում է այս երեք մարզերի կոնկրետ համայնքների վրա ազդեցություն ունեցող խնդիրները:
- Լոռու, Շիրակի և Տավուշի երեք մարզերը տրոհվել են ութ համայնքների՝ 1) Իջևան, 2) Տավուշի գյուղական համայնքներ, 3) Տավուշի քաղաքային համայնքներ (բացառությամբ Իջևանի), 4) Շիրակի գյուղական համայնքներ, 5) Գյումրի, 6) Լոռու գյուղական համայնքներ, 7) Սպիտակ և 8) Վանաձոր:

## Աղքատության բազմաչափ գնահատում

- Աղքատությունը սովորաբար չափվում է մեկ չափականությամբ՝ եկամտի կամ սպառման մասով, սակայն այս միաչափ մոտեցումը պատշաճ չի արտացոլում աղքատության հանգեցնող բազմաթիվ գործոնները:
- ԱՖ մեթոդի վրա հիմնված՝ Բազմաչափ աղքատության ինդեքսի (ԲԱԻ) մշակումը թիրախավորում է ծայրագույն աղքատության՝ չափումը, որը վերաբերում է 1) այն մարդկանց, ովքեր ապրում են հիմնական կենսագործունեության ցուցանիշների մասով միջազգայնորեն համաձայնեցված նվազագույն չափանիշներին չհամապատասխանող պայմաններում, և 2) նրանց, ովքեր ապրում են միաժամանակ մի քանի գործոններով

նվազագույն չափանիշներին չհամապատասխանող պայմաններում:

- ԲԱԻ-ի մշակման ԱՖ մեթոդը չափում է անհատների և ՏՏ-ների աղքատությունը ըստ բազմաթիվ գրկանքների, ինչպիսիք են՝ թերսնված լինելը, մաքուր խմելու ջրի անհասանելիությունը, անբավարար սանիտարական պայմանները, ոչ մաքուր վառելիքը և այլն:

<sup>1</sup> Ծայրագույն աղքատության սահմանումը վերցված է հետևյալ աղբյուրից՝ Alkire, S. and Santos, M.E. (2011). Training material for producing national human development reports: The multidimensional poverty index (MPI)

ԲԱԻ-ի չափման համար ներառվել են հինգ չափականություններ (ՀԲ-ի մոտեցման համաձայն): Յուրաքանչյուր չափականություն ունի ցուցանիշների և դրանց հարակից հարցերի իր հավաքածուն՝ հիմնված Հայաստանում աղքատության համատեքստի վրա:

### Հիմնական կարիքներ (1/5)

Ցուցանիշներ. 1) Արժանապատիվ կյանք. 2) Մարդասիրական օգնություն. 3) Փոխանցումներից կախվածություն. 4) Ծայրահեղ պարենային աղքատություն.

### Բնակարանային պայմաններ (1/5)

Ցուցանիշներ. 1) Սուբյեկտիվ բնակարանային պայմաններ. 2) Պատշաճ բնակարանային պայմաններ. 3) Գեբրնակեցում. 4) Առողջ ջեռուցում. 5) Կենտրոնացված ջրամատակարարման համակարգի մշտական հասանելիություն. 6) Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն. 7) Հոսող տաք ջուր. 8) Հանրային ծառայությունների որակ. 9) Տրանսպորտի հասանելիություն

### Կրթություն (1/5)

Ցուցանիշներ. 1) Միջնակարգ կրթություն. 2) Կրթական հաստատություն պարտադիր հաճախում. 3) Որակյալ կրթական ծառայություններ. 4) Կրթության հասանելիություն

### Աշխատանք (1/5)


Ցուցանիշներ. 1) Աշխատաշուկայում մասնակցություն. 2) Երկարաժամկետ գործազրկություն

### Առողջություն (1/5)


Ցուցանիշներ. 1) Առողջապահական ծառայությունների մատչելիություն. 2) Մովորական գործունեության դադարեցում. 3) Առողջապահական ծառայությունների հասանելիություն. 4) Առողջապահական ծառայությունների որակ

## Մարզային և համայնքային մակարդակի ԲԱԻ

### Մարզի մակարդակով խոցելի անձանց մասնաբաժինը



### Համայնքի մակարդակով խոցելի անձանց մասնաբաժինը



This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of CRRC-Armenia and do not necessarily reflect the views of the European Union.

Այս հրատարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:




# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ. ԲԱԶՄԱԶԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Համայնքային մակարդակով հետազոտություն Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում

## ԲԱԻ չափողականություններն ըստ ցուցանիշների

### Աղքատ տնային տնտեսությունների բաշխումը բոլոր երեք մարզերով



## Եզրակացություններ և առաջարկություններ

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համայնքային մակարդակով ԲԱԻ-ի հաշվարկները կենսական նշանակություն ունեն Հայաստանի համար, քանի որ առանց դրանց անհնար է տեսնել կարուկ տարբերություններն, օրինակ՝ Տավուշի գյուղական համայնքների (22.2%) և Տավուշի քաղաքային համայնքների (5.4%), Սպիտակի (14.7%) ու մյուս քաղաքային համայնքների միջև:
- Լոռու մարզն ամենազրկվածն է (71.3%) առօրյա սննդի և հագուստի համար բավարար գումար չունենալու առումով: Այս ցուցանիշով ամենազրկվածը Սպիտակն է (80.1%):
- Սպիտակում ՍՏ-ների 83,7%-ը, Իջևանի ՍՏ-ների 74,3%-ը չեն կարող իրենց թույլ տալ միս կամ համարժեք բուսական սնունդ ամեն երկրորդ օրը:
- ՍՏ-ների 80%-ից ավելին հայտնել են, որ չեն կարող իրենց թույլ տալ մեկշաբաթյա ամենամյա արձակուրդ վերցնել տնից հեռու այլ վայրում (ներառյալ որևէ այլ կացարանը կամ ընկերների/բարեկամների հետ մնալը):
- Շատ քիչ համայնքներ (ըստ էության՝ 2,4%-ից պակաս) են նշել, որ ի վիճակի են կոմունալ վճարումները կատարել «հեշտությամբ» կամ «շատ հեշտությամբ»:
- Մարզերի ՍՏ-ներում գերակշռում են բնակարանային և առողջապահական խնդիրները: Պարզվել է, որ կենտրոնացված ջրամատակարարման համակարգին հասանելիությունը ավելի խնդրահարույց է Լոռու (28.6%, Լոռու գյուղական համայնքների համար՝ 30.6%) և Տավուշի (27.7%, Տավուշի գյուղական համայնքների համար՝ 40.9%), քան Շիրակի (10%) համար:
- Դրամական փոխանցումներից կախվածությունն ավելի բարձր է Իջևանում, Տավուշում (և քաղաքային, և գյուղական համայնքներում) և Գյումրիում:
- Կրթությունն այն ոլորտն է, որի մասով արձանագրվել են նվազագույն զրկանքները:
- Աշխատաշուկային մասնակցությունը երեք մարզերի համար զրկվածության կարևորագույն ցուցանիշներից է: Աշխատունակ տարիքի (15-75) անձանց կեսից ավելին աշխատաշուկայի մաս չի կազմում (55.9%), իսկ 39.6%-ը երկարաժամկետ գործազուրկ է:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնել Լոռու, Տավուշի և Շիրակի

գյուղական համայնքների, իսկ քաղաքային համայնքներից՝ Սպիտակի վրա աղքատության հաղթահարման բազմաչափ քաղաքականության մշակման առումով:

- Լոռու մարզը և հատկապես Սպիտակը պետք է առաջնահերթություն ստանան տնային տնտեսությունների (ՏՏ)՝ առօրյա սննդի և հագուստի համար գումար չունենալու խնդրի դեմ պայքարելու մասով:
- Լոռուն, Շիրակին և Տավուշին արժանապատիվ կյանքի հասնելու գործում օժանդակելու համար անհրաժեշտ է առաջնահերթություն տալ հանրային առողջ սնուցմանը՝ որպես հանրային քաղաքականության կարևոր ոլորտ և սոցիալական ձեռներեցության ոլորտ:
- Համայնքների մշակութային կյանքը պետք է բարելավվի: Բազմաչափ աղքատության դեմ պայքարելու համար կարևոր նշանակություն կունենան սոցիալական նախաձեռնությունները, որոնք նորարարական լուծումներ կարող են առաջարկել տոների կազմակերպման համար՝ հատկապես Լոռու, Շիրակի և Տավուշի գյուղական համայնքներում, ինչպես նաև Սպիտակում:
- Թեև կոմունալ ծառայությունների վճարումը դրամական եկամտի խնդիր է, կոմունալ ծառայությունների կառավարման ոչ դրամական ասպեկտները (գիտակցելով, թե ինչպես են էներգիայի, թափոնների և ջրի օգտագործման տարբեր մետրիկաներն ազդում ՍՏ-ների/բիզնեսի վրա) կարող են կարևոր լինել Լոռու, Շիրակի և Տավուշի ՍՏ-ների համար:
- Առողջ ջեռուցումն ու հոսող տաք ջուրը երկու ամենակարևոր բնակարանային խնդիրներն են, որոնք առաջնահերթ հասցեագրման կարիք ունեն մարզերում: Ինչպես սնուցման դեպքում, առողջ ջեռուցումը ևս մեկ թեմա է հանրային իրազեկման բարձրացման, ինչպես նաև ՀՀ առողջապահության, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունների քաղաքականությունների համար:
- Միգրացիայի կանխարգելման ցանկացած ծրագրով կարելի է թիրախավորել Իջևանը, Տավուշը (ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքների) և Գյումրին:
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը պետք է ուշադրություն դարձնի Շիրակի գյուղական համայնքների նշված խնդրին՝ կրթության հասանելիության առումով:
- Աշխատաշուկայում ներգրավվածության ապահովումը կօժանդակի նաև բազմաչափ աղքատության և ընդհանուր առմամբ աղքատության դեմ պայքարին:



This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of CRRC-Armenia and do not necessarily reflect the views of the European Union.

Այս հրատարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՀՌԿ-Հայաստան հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: